



ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎՈՒՄ

Խորհրդային Հայաստանի մշակութային կենտրոնների մեջ կարևոր տեղ են զբաղում և համազգային նշանակություն ունեն հանրապետության պետական կենտրոնական արխիվները, որոնք իրենց հարուստ ու բազմաբովանդակ ֆոնդերով՝ հանդիսանում են հայ մշակույթի խոշորագույն գանձատներից մեկը:

Այստեղ են պահվում մեր մշակույթի ու պատմության բազմազան նյութերը, որոնք պատմում են հայ ժողովրդի և նրա մշակույթի, նրա ստեղծագործ աշխատանքի, ազգային անկախության ու ազատության համար մղած հերոսական պայքարի մասին: Այստեղ են գտնվում մեր մշակույթի բազմաթիվ գործիչների մտքի արդյունքները, հազարավոր նամակներ, անձնական գործեր՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, Երվանդադեի, Բաֆֆու, Հ. Այվազովսկու, Ռ. Պատկանյանի, Ղ. Աղայանի, Վ. Փափազյանի, Կոմիտաս վարդապետի, Ավ. Իսահակյանի, Ծ. Զարենցի, Ա. Բակունցի և շատ ուրիշների:

Պետական կենտրոնական արխիվը որպես մշակութային խոշորագույն օջախ, միշտ էլ գտնվել է Հայաստանի կառավարության ու շահրդության կենտրոնում:

Այդ հոգատարության առանձնապես ցայտուն ապացույցն է արխիվի նորակառույց շենքը, որին 1965 թ. նոր հարկեր ևս ավելացան: Այժմ Կիևյան փողոցի վրա վեր է խոյացած բազմահարկ ու գեղեցիկ, բոլոր հարմարություններով օժտված այդ նոր շենքը, որը արժանապատիվ հանգստավայրն է դարձել մեր ժողովրդի պատմության արժեքավոր ու դարավոր փաստաթղթերի:


Երեք կենտրոնական արխիվներից պետական կենտրոնական պատմական ար-

խիվը հանդիսանում է հանրապետության գիտա-հետազոտական հաստատություններից մեկը:

Այժմ պատմության արխիվի նյութերը ընդգրկում են 1649 թվականից մինչև 1920 թվականը: Այստեղ կենտրոնացված են վավերագրական նյութեր, որոնք առաջացել են ցարական իշխանության և ղեկավարման տեղական օրգանների գործունեությունից, որոնցից են՝ Հայկական մարզային վարչություն, Կովկասի փոխարքայի գրասենյակ, Երևանի նահանգապետի գրասենյակ, Երևանի նահանգային վարչություն, Երևանի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսչություն, Երևանի գավառային վարչություն, Սարգսրապատի տեղամասային վարչություն և այլն:

Մշակութային, տնտեսական, հասարակական, բարեգործական հիմնարկների և կազմակերպությունների գործունեության ընթացքում առաջացած ֆոնդերից են «Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան», «Երևանի Հայոց թեմական դպրոց», «Երևանի ս. Գայանյան օրիորդաց ուսումնարան», «Էրզրումի Սանասարյան դպրոց», «Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերություն», «Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն», «Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդ» և հարյուրավոր այլ ֆոնդեր՝ իրենց հարուստ նյութերով:

«Ներսիսյան» հայոց ազգային հոգևոր դպրոցի ֆոնդում կան ականավոր գրողներ Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանի, Ղ. Աղայանի, Պ. Պոռյանի, Հ. Թումանյանի, Գ. Դեմիրճյանի, Հ. Ալամդարյանի, Հ. Հովհաննիսյանի, Մ. Եկմալյանի, Ստ. Մալխասյանի և



Պետական կենտրոնական արխիվի շենքը

այլոց կյանքի ու մանկավարժական գործունեության վերաբերյալ նյութեր:

Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի ֆոնդում կան Կոմիտաս վարդապետի, Սպիրիդոն Մելիքյանի, Ստ. Մալխասյանի, Մ. Արեղյանի, Ստ. Կանաչյանի, Ա. Տերտերյանի, Հ. Բահատրյանի, Ա. Մուսվյանի, Ա. Խանջյանի, Ա. Բակունցի և ճեմարանավարտ հարյուրավոր այլ ուսանողների անձնական գործերը, ավարտական շարագրությունները, այնտեղ աշխատած ականավոր մանկավարժների գործունեության վերաբերյալ արժեքավոր նյութեր:

Չափազանց հարուստ է արևելահայ մամուլի ավագագույն օրգան «Մշակ» թերթի խմբագրության արխիվը: Այդ թերթը իր գոյության կեսդարյան տարիների ընթացքում առաջադիմական ջահը ձեռքին բռնած, ղեկավարել և լուսավորել է հայ միտքը:

Սակայն պատմական արխիվի ֆոնդերի թվումն է «Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան» և «Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ»-ը:

Այստեղ կենտրոնացված են նաև հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչների անձնական արխիվները: Այժմ պատմության արխիվում են կենտրոնացվում նաև սփյուռքահայ հասարակական-գրական գործիչների ու պատմաբանների արխիվները:

Արխիվային նյութերի պատկառելի աչքանակը պատմության արխիվ է մուտք գործել,

արխիվիստների քրտնաջան աշխատանքի շնորհիվ, կաթիլ առ կաթիլ:

Պատմական արխիվի նոր փաստաթղթերով հարստացմանը շնորհակալ օգնություն է ցույց տալիս Ամենայն Հայոց կաթողիկոս Վաղգին Առաքինը:

Մեծ է եղել հայոց «դիվանների» նշանակությունը մեր ազգային մշակութային ձևավորման ու զարգացման գործում:

Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի փաստաթղթերը սկսվում են 1920 թվականից:

Այդ արխիվում են կենտրոնացված և հետզհետե կենտրոնացվում՝ հանրապետության պետական իշխանության և կառավարման բարձրագույն ու տեղական օրգանների, ուսումնական հաստատությունների, պետական հիմնարկների, առողջապահական և գրեթե բոլոր առաջնակարգ հաստատությունների գործունեության ընթացքում ստեղծված արխիվային փաստաթղթերը:

Այդ արխիվում է պահպանվում նաև «ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ֆոնդը (№ 362՝ 1945—1949 թթ.), որը հարուստ նյութ է պարունակում հայրենադարձության և հայրենադարձների մասին:

ՀՍՍՀ ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվում են կենտրոնացվում հայ ժողովրդի անցյալ և

ներկա պատմության ու կյանքի բազմապիսի բնագավառներն արտացոլող ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերը: Ներկայումս այդ արխիվը ունի մի քանի տասնյակ հազար փաստաթուղթ, որոնք մշակված ու դասավորված են կատալոգներում:

Այստեղ կարելի է գտնել մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած բոլոր կարևոր դեպքերի, հայ հերոսների, հասարակական ու պետական, գրական, եկեղեցական գործիչների, հայոց եկեղեցիների ու վանքերի, հայ ազատագրական շարժումների, քաղաքացիական կռիվների, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության, նրա մարտիկների վերաբերյալ հազարավոր ֆոտո փաստաթղթեր:

Հայաստանի կառավարության որոշմամբ մոտ ժամանակներս պետք է սկսվի կառուցվել ֆոտո-ֆոնո-կինո պետական արխիվի համար նոր բազմահարկ շենք, ժամանակակից պահանջներին համապատասխան:

Պատմության ղեկավար բերումով հայ ժողովուրդը պետականությունը կորցնելով ցրվել է աշխարհով մեկ և հայրենիքից դուրս հիմնադրել մշակութային ու կրթական հաստատություններ: Այդ պատճառով էլ անտեսական, քաղաքական, մշակութային կյանքի բազմաթիվ կարևորագույն պատմական երևույթներ տեղի են ունեցել հորհրդային Հայաստանի այժմյան սահմաններից դուրս, հատկապես Ռուսաստանի խոշոր քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում, Նոր Նախիջևանում, Լիովում, Կամենեց-Պոդոլսկում և Անդրկովկասում:

Այդ քաղաքների կենտրոնական արխիվներում հայ կյանքի գրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ հարուստ արխիվային նյութեր կան: Հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասը կազմող այդ նյութերը կենտրոնացնելու նպատակով հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչությունը ստեղծել է միկրոպատճենների, միկրոֆոտոպատճենների բաժին՝ իր արխիվադարաններով, լաբորատոր հարմարություններով և առանձին ընթերցասրահով: Պետության տրամադրած միջոցներով Միության տարբեր արխիվներից կատարում է հայ ժողովրդի պատմության վերաբերյալ առավել արժեքավոր փաստաթղթերի, ուլանիսկի ամբողջական ֆոնդերի միկրոպատճենահանում:

Այդ բաժնի նպատակներից մեկն է նաև արտասահմանյան օտար արխիվներում պահպանվող հայ ժողովրդի վերաբերյալ առավել արժեքավոր նյութերի միկրոպատճենների ձեռք բերումը: Արդեն մի քանի հազար միկրոկադր փաստաթղթեր ստացվել են Ա-

մերիկայի Միացյալ Նահանգներից և Ռուսիայից:

Պետական կենտրոնական արխիվների բաղկացուցիչ մասն է կազմում նաև գիտատեղեկատու գրադարանը, որն ունի կահավորված սենյակներ և ընթերցասրահ: Արխիվի աշխատակիցներից բացի, պետական արխիվների բազմաթիվ ուսումնասիրողներ օգտվում են նաև գրադարանի տպագիր գրականությունից ու պարբերականներից: Գրադարանը ունի հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով գրքերի ֆոնդեր: Հարուստ է նաև պարբերական մամուլի և ամսագրերի ֆոնդը:

Գրադարանը կոմպլեկտավորման նպատակով հետզհետե ընդարձակում է իր կապերը ինչպես Միության տարբեր հանրապետությունների գրադարանների, այնպես էլ սփյուռքահայ հայրենասեր գործիչների հետ:

Գրադարանը պարբերաբար լրացվում է նոր ու արժեքավոր գրականությամբ ու պարբերական մամուլով: 1966 թ. ս. էջմիածնի Մայր Աթոռի միջնորդությամբ սփյուռքից ստացվել է «Հայաստանի կոչնակ», «Բաղմալէպ», «Սեան», «Վէմ», «Հայրենիք», «Նոր Հաճըն», «Շիրակ» և մի շարք այլ ամսագրերի ու շաբաթթերթերի բազմաթիվ տարիների հավաքածուներ:

Սյուռքահայ հասարակական և հայրենասեր գործիչներից ստացվում են ինչպես արժեքավոր արխիվային նյութեր, այնպես էլ արժեքավոր գրքեր՝ հայ և օտար լեզուներով: Այսօր չկա և չի կարող լինել գիտական որևէ աշխատություն, որևէ հանդես կամ թերթ, ուր չօգտագործվեն պետական արխիվների նյութերը: Գիտաաշխատողների ջանքերով արդեն հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր ժողովածուներ: Իսկ տպագրության համար պատրաստ են՝ հայ ծովանկարիչ Հովհաննես Ավագովսկու «Նամակախին», «Հովհաննես Հովհաննիսյան», «Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյան», «Գայ» (Հայկ Բժշկյանց), «Կուլտուրական շինարարությունը Հայաստանում 1921—1941 թթ.» և այլ ժողովածուներ: Ընթացքի մեջ են բազմաթիվ այլ ժողովածուների կազմումը: Այս տարի կավարտվի հայ ժողովրդական հերոս Անդրանիկ Օղանյանի կյանքն ու գործունեությունը պատկերող հարուստ փաստաթղթերի ժողովածուի կազմումը:

1960 թվականից արխիվային վարչության և պետական արխիվների աշխատողների ջանքերով տարեկան երեք համարով լույս է տեսնում «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսը: «Բանբերը» իր էջերը տրամադրում է նաև սփյուռքահայ բանասերներին: Արդեն

պարզվել է Հ. Միրունու «Հայկական Տրանսպիրանիան նոր նյութերու լույսի տակ» և «Արխիվային հայկական նյութեր Ռումանական հողի վրա» արժեքավոր ուսումնասիրությունները:

Հայաստանի պետական կենտրոնական արխիվները իրենց դռները լայնորեն բացել են հայ ժողովրդի և մեր բոլոր ազնիվ բարեկամների առջև: Այսօր արխիվ են գալիս հարյուրավոր ուսումնասիրողներ, դրոսաշրջիկներ, տարբեր մասնագիտությամբ հենչպես խորհրդային Միության, այնպես էլ անաշխարհի տարբեր քաղաքներից ու վայրերից:

Վերջերս պետական կենտրոնական արխիվացել են Ս. Տ. Վաղգեն Ա Հայոց Հայտապետը իր շքախմբով:

Վեհափառ Հայրապետը իր գործունեության մեջ կարևոր տեղ է հասկացրել Հայպատանի մշակութային օջախներին հնարավորին չափ օժանդակելու շնորհակալ աշխատանքին:

Այսօր պանդուխտ հայի հետ մայր հայ-

րենիք է վերադառնում նաև պանդխտի պատմությունը և ի մի հավաքվում և կենտրոնացվում Հայկական պետական կենտրոնական արխիվում:

Միջուկում ապրող տարբեր մարդկանց մոտ գտնվում են հազարավոր արժեքավոր փաստաթղթեր, որոնց սպասում են մեր պատմաբանները: Այդ վավերագրերը նրանց հարուստ նյութ կարող են տալ լուսաբանելու մեր ժողովրդի պատմության մութ էջերը, ինչպես նաև գրելու սփյուռքահայ գաղթօջախների ամբողջական պատմությունը:

Մեր փոթորկահույզ պատմության նըշխարներն ու վկաները հավաքելու, Հայաստանի պետական կենտրոնական արխիվը նորանոր նյութերով հարստացնելու պատվավոր և համազգային գործին պետք է փարի, բոլորանվեր թափով, յուրաքանչյուր նախանձախնդիր հայ:

Ինչքան ի մի հավաքվեն հայ բազմադարյան մշակույթի աշխարհասփյուռ էջերը, այնքան ամբողջական կդառնա մեր մշակույթի պատմությունը:

